

ՄԱՏԵՆԱԽՈՍԱԿԱՆ

ՆՈՐ ԴԱՍԸՆԹԱՑՔ ԿՐՈՆԻ

Ա.

Հիմ Ույսի Պատմորիւնը . տառական կարգերու համար . — Զարմայր Ա. Գիլի . Կեղիւթեան . Հրատկ . Արև Գրատուն և հրատարկչական Յանդր Աբրահամեան . Կ. Պոլիս 1929: 8° էջ 116+Դ. Գիլ 40 Ղրու:

Հիմ Կտակարանի պատմութեան համառօտ և պարզ գասագիրք մըն է նախակարգարանի համար, զոր պատրաստած է Արժ . Տ. Զարմայր Աւգ . Քնյ . Կէպիւրեան : Դովիկի աշխատանք մը ւեզուն բաւական պարզ ու սահուն է :

Մեր մէջ գասագիրքերը հազուագիւտ են, մանուանդ այժմ : Հիմերը չեն կրնար նոր պահանջները լրացնել . նորեր պէտք են, և սակայն պատրաստողներ չկրն . չատանգամ տպագրութեան ծախքն իսկ կարելի չէ հայտայթել :

Տ. Զարմայր Քնյ . նախակրթարանի տարրական կարգերուն համար պատրաստած է այս գասագիրքը, որ բաժնուած է վեց շրջաններու . 1. Աշխարհի ստեղծուելն մինչեւ Զրհեղեղ . 2. Զրհեղեղին մինչեւ Արքահամի կոչումը . 3. Արքահամին մինչեւ եղիպատոսէ ելքը . 4. Եղիպատոսէ ելլելին մինչեւ թագաւորութեան հաստատուիլը . 5. Թագաւորութեան հաստատուելին մինչեւ Բարելոնի գերութիւնը . և 6. Բարելոնի գերութենէն մինչեւ Յիսուսի Ծնունդը :

Ահա Հրէից ամբողջ պատմութիւնը իր կարեւոր գիծերուն մէջ, մինչև Յիսուսի Ծնունդը : Բնական է որ Յիսուսի պատմութիւնն ու Աւետարանը սորվեցնելէ առաջ՝ աշակերտները պէտք է որ համառօտ գաղափար մը ունենան Հիմ Կտակարանի պատմութեան մասին . քանի որ նոր Կտակարանի պատմութիւնը կապ ունի Հիմին հետ, և դէպքեր կան զորս առանց անոր գժուար է ըմբռնել . նոր Կտակարանի պատմութիւնը Հիմ Կտակարանի վրայ հիմնուած է :

Մանկավարժական տեսակէտով թերեւ գժուար է խստապահանջ ըլլալ : Ի՞նչպէս

սովորութիւն է, ամբողջ պատմութիւնը ծայրէ ի ծայր մանուկին ձեռքը կը զրուի : Ասիկա կրնայ իր առաւելութիւններն ունենալ — աշակերտը՝ մանուկ հասուկէն հաստատուն հիմ մը կը դնէ կրօնական և պատմական կարգ մը ձմարտութիւններու : սակայն, ունի նաև իր թերութիւնները : Հոն պատմութիւնները և դէպքեր կան ուրոնք հետաքրքրական չեն, և մանուկը չի սիրու զանոնք . հոն կան նաև դէպքեր որոնք չեն կրնար հաշտուիլ մանկական բարի միաբարերուն հետ : Զօր օրինակ . մանուկները չեն կրնար սիրել ա՛յն Աստուածը որ Արքահամին կը հրամայէ զոհել իր մէկ հատիկ զաւակը, անմեղ իսահակը : Անոնք զԱստուած կը ճանչնան ու կ'ըմբռնեն իրեւ իրենց բարի և ամենական հայրիկը, և չեն կրնար հաշտուիլ այդ գաղափարին հետ :

Մանուկներու համար պատրաստուած նման գասագիրք մը պէտք է որ ունենայ մաքուր տպագրութիւն՝ մաքուր թուղթի վրայ . և պատկերները, որոնցմով ճոխ է այս հատորը, անհրաժեշտ է որ յատակ և մաքուր ըլլան, հետաքրքրելու համար պղտիկները . գժբախտաբար այս տեսակէտէն անթերի չէ այս զիրքը : Պէտք էր որ տպագրիչը հոգ տանէր այս կէտին :

Ինչպէս նախարանին մէջ զիտել կուտայ պատրաստողը, աշխատուած է որ հատորը համառօտ ըլլայ, և սակայն կարեւոր կէտերը չեն մոսցուած : Ամէն ըջանին ետեւ ամփոփում մը զրուած է որ կ'օգնէ աշակերտներուն : Իսկ զրքին վերջը ուսուցիչներուն համար բեղադրութիւններ կան զրուած, որոնք կրնան ուսուցիչը տառձնորդել՝ զարը բացատրելու և աշակերտներուն հասկնալվ ընելու համար :

Կ'արժէ որ այս գասագիրքը գործածուի մեր նախակրթարաններուն մէջ :

ՍՍՐԴԻՄ ՍՍՐԿ . ՄԱՆՈՒԿԵԱՆ